

ՀԱՅԱԳԻՏ ԼՈՒԻ ՄԱՐԻԷՍ

LOUIS MARIÈS

ԿԵԱՆՔԸ, ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

ԵՒ ՆՐԱ

«ՀԱՅԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԿՐԿՆԱԿԻ ԲՆՈՅԹԻ ՄԱՍԻՆ»

ԱՆՏԻՊ ՅՕԴՈՒԱՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ֆրանսիան եւրոպական այն երկիրն է, որ առաջինն է հետաքրքրուել հայագիտութեամբ, ցանկացել է ունենալ հայերէն ձեռագրերի և ապագիր զրփերի գրադարան: Եւրոպայում 1810ին առաջին անգամ Փարիզում է սկսուել գրաբարի պաշտօնական դասաւանդումը Արեւելեան կենդանի լեզուների ուսումնական դպրոցում (École Nationale des Langues orientales vivantes): Առաջին ուսուցիչը եղել է Յակոբ Շահան Զրպեհեանը: Նրան յաջորդել են Ֆրանսիացիներ իբրեւ դասախօս: Այժմ այնտեղ աշխարհարար և գրաբար է դասաւանդում պրոֆ. Ֆէդէրիք Ֆէդին:

Ֆրանսիան կարող է իրաւացիօրէն հպարտանալ իր հայագէտ զուակներով, որոնցմէ են Լը Վալան դը Ֆլարիվալ, Ժ. Սէն-Մարթէն, Բրոսէ, Լանդուս, Դիւլարիէ, Քարիէր, Միյէ, Մաքլէր, մեր օրերում Հ. Շարլ Մերսիէ և պրոֆ. Ֆ. Ֆէդի և ուրիշներ: Հին և արդի հայերէնի դասաւանդումով և հայագիտական բազմազան ուսումնասիրութիւնների մէջ հայագիտական հարցերի համակարգմանի մշակումով նրանք մեծապէս նպաստել են փոքր, բայց մշակութային փառաւոր անցեալի ժառանգորդ հայ ժողովրդի լեզուական ու մատենագրական գանձերի գիտական ճանաչմանը եւրոպայում:

Ֆրանսիացի երախտաւոր հայագէտների փայլուն համաստեղութիւնից է նաեւ մեր դարաշրջանի բանասէր ու լեզուարան, հանգուցեալ Հ. Լուի ՄԱՐԻԷՍը (Louis Mariès) (1876-1958): 1926ին Փարիզի "Institut Catholique" բարձրագոյն դպրոցում բացուեց գրաբարի դասաւանդման երկրորդ կենտրոնը Ֆրանսիայում. դասախօս նշանակուեց Լ. Մարիէսը և իր պաշտօնին մնաց մինչև 1946 թուականը, երբ տեղը զիջեց իր պատրաստած շնորհալի հայագէտ Հ. Շարլ Մերսիէին:

Մի քանի համառօտ ակնարկներից բացի, չկայ մի մտքովական ուսումնասիրութիւն Ֆրանսիական հայագիտութեան մասին. հաւնեմք նաեւ նրանց կարեւորագոյն գործերի հայերէն թարգմանութիւնները, որոնք մասամբ երախտագիտական հատուցում կը լինէին: Կարծում ենք, որ այդ երախտագիտական գործին և հայկական լայն շրջանակներում Ֆրանսիացի մի հայագէտի ծանօթացման նպատակով կը լինենք մեր այս մենագրութեամբ, ուր, առաջին անգամ, փորձել ենք ըստ արժանին գնահատել Մարիէսի հայագիտական վաստակը: Նախ ուրուագծել ենք

նրա համեմատ ու պարզ կեանքի ուղին և տուել նրա հայազգիսկան աշխատանքների մատենագիտական ցանկը՝ վերնագրերի հայերէն թարգմանութեամբ։ Այնուհետև հայագիտութեան բաժինների տակ խմբաւորել և ներկայացրել ենք նրա ուսումնասիրութիւնները, կանգ առնելով աշխատութեան գլխաւոր խնդրի, քննարկուած ամենակարեւոր հարցերի և հեղինակի եզրակացութեան վրայ։ Չենք անտեսել նաև դրանց մասին տպագրուած գրախօսութիւնները, որքան կարողացել ենք յայտնարել ժամանակի գիտական մամուլում։ Թերևս այսպիսով մի գաղափար առած կը լինենք ընթերցողին նրա այս կամ այն աշխատութեան մասին, բանասէրին կամ լեզուաբանին թողնելով իրեն հետաքրքրող ուսումնասիրութեանը մանրամասն ծանօթանալու աշխատանքը։ Ամէն հարցում չէինք կարող մէկ խօսքով վճռել Մարիէսի տեսակէտների բացարձակ ճշգութիւնը կամ սխալականութիւնը։ Սակայն որոշ հարցերում չենք զլացել մեր կարծիքն արտայայտել, որքան ներում էին մեր գիտելիքները։

Մարիէսը հրատարակել է հայագիտութեան հետ առնչուող բանասիրական և լեզուաբանական աշխատանքներ՝ գրքեր, յօդուածներ և գրախօսութիւններ, կազմել է անգլիացի հայագէտ Կանիքիթի աշխատութիւնների մատենագիտական վերլուծական ցանկը։ Ուստի նրա հայագիտական աշխատանքները խմբաւորելու ենք բանասիրական, լեզուաբանական և մատենագիտական երեք ենթավերնագրերի տակ։ Սակայն պէտք է գիտենալ, որ Մարիէսը որքան բանասէր է բառիս բուն իմաստով, նոյնքան էլ լեզուաբան է և գրաբարի մասնագէտ։ Պատրաստել է եղնիկ կողբացու և Հիպոդիտոս Հռոմայեցու գործերի հին հայերէն գիտական բնագրերը, որոնց լեզուական և բնագրային բազմաթիւ հարցեր լուսարանել է հարկբարւար ծանօթագրութիւնների մէջ։ Ուստի մեր երեք խմբաւորումները որոշ չափով արհեստական են։ Մարիէսը Ֆրանսերէնի կամ լատիներէնի է թարգմանել նաև հայերէն հին բնագրեր (Եղնիկ, Հիպոդիտոս Հռոմայեցի եւայլն)։

Մարիէսը պատմագէտ չէ, ուստի մեր պատմագիրների գիտական բնագրերի պատրաստման կամ թարգմանութեան ձեռնամուխ չի եղել։ Լինելով կիկլոպական, նա զբաղուել է հայ մատենագրութեան կրօնական բնոյթի դրքերով, կամ գրախօսել է մեր հոգեւոր մատենաներին նուիրուած աշխատութիւններ։ Այս գիտական աշխատանքները կատարել է մասնագիտօրէն, որովհետև նա միաժամանակ հելլենագէտ էր, հայրաբան, լատինագէտ, հայագէտ, հին գրական լեզուների և հին գրականութիւնների քաջատեղեակ։

Մարիէսի դասախօսական և գիտական գործունէութիւնը ապշեցուցիչ է. դասաւանդել է յունական և լատինական հին գրականութիւն, գրաբար, յունական բանասիրութիւն, յունական մանրանկարչական արուեստի տեսութիւն, Աստուածաշնչի մեկնութեան պատմութիւն։ Աշխատութիւններ է հրատարակել յունական, հայկական, ասորական հայրաբանութեան, Հին և Նոր կտակարանների, յունական և լատինական դասական գրականութեան ու լեզուների մասին, ինչպէս նաև այս բոլոր բնագաւառներին վերաբերող գրքերի գրախօսութիւններ։ Սակայն նրա հրատարակութիւնների մեծագոյն մասը հայագիտութեան է նուիրուած։

Մարիէսից անտիպ մնացել է «Հայկական մշակոյթի կրկնակի

ընդթը (Լեզու և գրականութիւն)՝ մի յօդուած, որ կարդացել է հայկական մի հաւաքոյթում 1946 թուականի Դեկտեմբերի 22ին: Մենագրութեան վերջում այն հրատարակում ենք բնագործ և հայերէն թարգմանութեամբ, չնորհիւ մեզ այն տրամադրող Հ. Շարլ Մերսիէի, որին հրապարակով յայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

Յատուկ անունների տառագործութիւնը կատարեցինք ըստ արեւելահայերէնի արտասանութեան:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՑ ԱՎՆԱՐԿ՝

(1876 – 1958)

ԼՈՒԻ ՄԱՐԻԷՍԸ ծնուել է Փարիզում 1876 թ. Օգոստոսի 19ին: Միջնակարգ (կամ՝ երկրորդական) կրթութիւնն ստանալուց յետոյ, 1893 թ. մտել է հոգեւոր նորընծայարան, որտեղ աչքի է ընկել ուսման մէջ ցուցաբերած առաջադիմութեամբ: 1899ին, աւարտելով համալսարանական դասընթացները՝ ստացել է Licenceի վկայական և նորընծայարանում 1902 – 1904 տարիներին դասաւանդել է յունարէն և լատիներէն: Աստուածաբանութիւն սովորելիս ցուցաբերել է գիտահետազոտական աշխատանք կատարելու փայլուն ընդունակութիւններ, մասնաւոր ժողովուրդի (Աստուածաշունչ) նոր յայտնաբերուած երրայերէն մի բնագրի մասին յայտարարուած մրցոյթի առթիւ գրած շարադրութեան մէջ¹, որով նրան շնորհուել է ուսումնասութեան երկու տարուայ իրաւունք ևս:

1910 թ., Սաղմոսների մի մեկնութեան վերաբերեալ իր առաջին գիտական աշխատանքից յետոյ², Մարիէսն զգացել է, որ իր ուսումնասութիւնը դեռեւս թերի է, թէեւ արդէն զիւէր հայրաբանութիւն, երրայերէն, ասորերէն և եթովպերէն: Ուստի անուանի մասնադէսներից նա սկսում է սովորել արգի յունարէն և ռուսերէն, Արեւելեան կենդանի լեզուների դպրոցում (Ecole des Langues orientales vivantes) Ֆ. Մաքլերից՝ գրաբար հայերէն և հայ հին գրականութիւն: Միաժամանակ Բարձրագոյն ուսման դպրոցում (Ecole des Hautes études) յաճախում է յունական գրչարուեստի և Անթուան Մեյէի համեմատական քերականութեան դասընթացներին: Նիկողայոս Մառից և վրացագէտ Մարիս Բրիերից սովորել է վրացերէն: Ինչո՞ւ յատկապէս այս լեզուները, ինչպէս յայտնի է, Արեւմտեան Եկեղեցու հայրերի որոշ երկերի յունարէն բնագրերը կորել են, պահպանուել են նրանց միայն ասորերէն, հայերէն կամ վրացերէն հին թարգմանութիւնները:

Առաջին համաշխարհային պատերազմը խանգարել է նաև Մարիէսի կեանքը: Սկզբում նա ազատ է մնացել գինեւորական ծառայութիւնից և ժերմէի միջնակարգ դպրոցում փոխարինել հին գրականու-

¹ Կենսագրական տուեալները մասամբ քաղել ենք հետևեալ մատչուած աշխատանքներից. Graffin F., Le Père Louis Mariès. Nouvelles de l'Institut Catholique de Paris, déc. 1958, p. 18-21; Dumézil G., L'oeuvre de Louis Mariès. Revue de l'histoire des Religions, t. 155, avril - juin 1959, p. 268-270.

² "Dissertation sur le texte hébreu, retrouvé, de l'Ecclésiastique (Sagesse de Sirach)", Revue biblique, 1907, p. 5-10.

³ "Le Commentaire sur les Psaumes de Diodore de Tarse". Comptes rendus des séances (de l'Académie des Inscriptions et Belles Lettres), 1910, p. 542.

թիւնների ուսուցչին: Սակայն, 1915ից սկսած, իր ցանկութեամբ, բանակում ծառայել է իբրեւ զինուորական քահանայ և ցուցաբերած անձնուիրութեան համար արժանացել է Պատերազմական խաչի և Պատուոյ լեգէոնի շքանշաններին (Croix de Guerre և Légion d'honneur):

1919 թ. շարունակել է ուսումնառութիւնը: 1913ին արդէն աւարտել էր արդի յունարէնի դասընթացը: Յետագայում Կոլեժ դը Ֆրանս (Collège de France) բարձրագոյն դպրոցում լսել է Մեյէի դասախօսութիւնները հին սլաւոներէնի, հայերէնի և յունարէնի համեմատական քերականութեան վերաբերեալ: Ստացել է նախ՝ հայերէնի, այնուհետև ուսուցչէնի գերագանցիկի վկայական:

Տկար առողջութեան պատճառով, Մարիէսը թէև ստիպուած է եղել սահմանափակել աշխատանքային ժամերը, այնուհանդերձ 1924 թ. նրա հրատարակած 127 և 212 էջանոց երկու մենագրութեան հիման վրայ Փարիզի համալսարանի՝ Սորբոնի գիտական խորհուրդը 1924 թ. Նոյեմբերի 17ին նրան շնորհել է բանասիրական գիտութիւնների դոկտորի աստիճան (Docteur ès lettres):

Ինչպէս յայտնի է, Ֆրանսիայում այս գիտական աստիճանը հայացելու համար պէտք է ներկայացնել երկու աշխատանք՝ մէկը Գլխաւոր և միւսը լրացուցիչ: Մարիէսի երկու աշխատութիւններն էլ արժանացել են մասնագէտների բարձր գնահատականին: Նրա լրացուցիչ աշխատանքը (212 էջ) եղնիկի «Եղծ աղանդոց» խորագրով յայտնի դարձած երկի բանասիրական՝ բնագրային և աղբիւրագիտական, ուսումնասիրութիւնն է: Այս աշխատանքի հիման վրայ Անթուան Մեյէն հեղինակին դասել է լաւագոյն հայագէտների շարքում, իսկ մի քանի տարի անց՝ նրան հռչակել է Ֆրանսիայի լաւագոյն գրաբարագէտը: Դեռևս 1920ից սկսած, Մարիէսը հրատարակել էր հայագիտական յօդուածներ Աւետարանի հայերէն թարգմանութեան վերաբերեալ (տե՛ս մատենագիտական ցանկում):

Այսպիսով Մարիէսի երկարատեւ, խորամուխ և համակողմանի պատրաստութիւնը լատինական և յունական դասական գրականութեան, ընդհանուր լեզուաբանութեան, յունական և արեւելեան հայրաբանութեան, բիւզանդական և հայ մատենագրութեան ասպարէզներում պատկուտ է յաջողութեամբ, և այդ անխնայ աշխատողը Ֆրանսիայում ձեռք է բերում համարեա եզակի դիրք. կանգնում է Արեւելքի և Արեւմուտքի խաչմերուկում, «Ինչպէս ինքը՝ հայ ժողովուրդը», գրել է Ֆ. Գրաֆէնը նրա մահուան առթիւ՝ նկատի ունենալով նրա հայագիտական վաստակը:

Գիտական հանդէսներ նրան հրաւիրում են աշխատակցելու:

Աբելեիւտան կեֆլանի լեզուների ազգային դպրոցը նրան յաճախ է հրաւիրել իբրեւ քննական յանձնաժողովների անդամ: Վերջում Լուսուորութեան նախարարութիւնը նրան նշանակել է քննական յանձնաժողովի մշտական անդամ: «Patrologia Orientalis» արեւելեան հայրաբանութեան մատենաշարի հրատարակիչ Հ. Ռենէ Գրաֆէնը Մարիէսին վստահում է ինչպէս այս ժողովածուի մէջ, այնպէս էլ «La Revue de l'Orient chrétien» հանդէսում ապագրուող հայերէն և սլաւոներէն բնագրերի հրատարակութեան գործը:

Երբ Ռենէ Գրաֆէնի առաջ խնդիր է դրուել վերափոխել «Institut Catholique» բարձրագոյն դպրոցում արեւելեան լեզուների դասաւանդումը, նա 1926ին Մարիէսին առաջարկում է այստեղ առաջին անգամ

դասաւանդել գրաբար: Այդպիսով, Արեւելեան կենդանի լեզուների դպրոցից յետոյ, Փարիզում գրաբարի երկրորդ պաշտօնական դասընթացն է բացւում մի այլ բարձրագոյն դպրոցում: 1926ի Նոյեմբերի 8ին Մարիէսը կարգացել է ներածական դասախօսութիւնը (տե՛ս ստորեւ), Նա այս ամբիոնում պաշտօնավարել է քսան տարի: Նրան յաջորդել է իր պատրաստած հայագէտը՝ Հ. Շարլ Մերսիէն, որ յաջողութեամբ շարունակում է դասաւանդել գրաբար (և վրացերէն):

Կոլեժ դը Ֆրանս բարձրագոյն դպրոցում Մարիէսը, իբրեւ ունկընդիր, իր լրջութեամբ, հետեւողականութեամբ և ջանասիրութեամբ վաղուց արժանացել էր Մեյէի ուշադրութեան: Ուստի նկատի առնելով նաև նրա լեզուաբանական և հայագիտական գիտելիքները՝ Մեյէն իր կեանքի վերջալոյսին, երբ արդէն համարեա կուրացել էր, խնդրել է աշխատակցել իր «Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique» (Ուրուպիժ գաւական հայերէնի համեմատական ֆեռականութեան) աշխատութեան առաջին հրատարակութեան (Վիեննա, 1902) բարեփոխութեան: Մարիէսին քաջածանօթ բանասէր ժորժ Դիւմէզիլի վկայութեամբ, Մարիէսն այդ աշխատանքը համարել է իր հայագիտական գործունէութեան գագաթնակէտը: Նա ոչ միայն հեղինակին բնութեւրդել է «Ուրուպիժ» առաջին հրատարակութիւնը և գրի առել բարեփոխւած խմբագրութիւնը, հսկել տպագրութեանը, այլև կազմել է աշխատութեան վերլուծական ցանկը, որ տպագրւած է գրքի մերջում և շատ է հնչատացնում օգտագործումը: «Ուրուպիժ»ը գրախանութներում վաճառքի է հանուել հեղինակի մահից մի քանի շտաբ յետոյ:

Մեյէի կեանքի վերջին տարիներին Մարիէսը նրան օգնել է նաև յօգուածներ գրելու, Ֆրանսերէն լեզուով ամփոփելու Հրաչեայ Աճառեանի «Հայերէն արմատական բառարան»ը, սակայն աշխատանքն ընդհատուել է Մեյէին մահուան գիրկը հասցնող ծանր հիւանդութեան պատճառով:

Մեյէն և Մարիէսը դարձել էին մտերիմ բարեկամներ. մահամերձ Մեյէի սնարին նա հսկել է մինչև նրա վերջին շունչը և անհուտաութիւնից նրան քրիստոնէական դարձի է բերել, ինչպէս վկայում է Հ. Շ. Մերսիէն: Նա միշտ էլ հպարտ նշել է, որ լեզուաբանական և հայագիտական հարցերում ինքը Մեյէի աշակերտն է, պատկանում է նրա լեզուաբանական և հայագիտական դպրոցին:

Մարիէսին որպէս հայագէտի բարձր են գնահատել նաև Հայերը:

1934 թ. Մարտի 11ին Վենետիկի Ս. Ղազար կղզու Մխիթարեան կաճառը Մեյէին, Մաքլէրին և Մարիէսին միաժամանակ ընդունել է անդամ որպէս արժանաւոր հայագէտներ: Մարիէսին, իբրեւ հայագէտի, նոյնքան բարձր են գնահատել նաև Վիեննայի Մխիթարեանները, որոնց մօտ նրա այցելութիւններից մէկը եղել է 1931ի Նոյեմբերին: Նա վաղելի է Աբշակ Զօպանեանի և Փարիզի ողջ հայութեան ընտրանու խորին յարգանքը: 1937 թ. փետրուարի 27ին, երբ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան «Պօլոս Նուպար» գրադարանի դահլիճում հայ մատուցողականութիւնը յարգանք է մատուցում հանգուցեալ հայագէտ Անթուան Մեյէի յիշատակին, ուրիշ անուանի Ֆրանսիացիների հետ

⁴ Dumézil G., L'oeuvre de Louis Mariès (NICP, p. 268. յապաւումը լրիւ տե՛ս ստորեւ):

հրաւիրուեմ է նաեւ Լուսի Մարիէսին, որ հանդէս է գալիս «Մեյլէն Ինչ ըմբռնուեմ ունէր դաստական հայերէնի մասին» ելոյթով⁵։

Մարիէսը, ինչպէս նշուեց, լոյս է բնծայել հայրաքանդական երկերի հրատարակութիւններ՝ յունարէն բնագրով, հայերէն և վրացերէն դասական թարգմանութիւններով, ֆրանսերէն կամ լատիներէն իր փոխադրումներով հանդերձ։ Այսպիսի հսկայական աշխատանքներում նրան գործակցել են վրացագէտ Մորիս Բրիէրը և նրա աշակերտը՝ հայագէտ Շարլ Մերսիէն։ Բանասերներին յայտնի է, որ այս կարգի հրատարակութիւնները տաժանելի աշխատանք, լեզուական և բանասիրական խոր ու բազմակողմանի գիտելիքներ են պահանջում. ուստի նրա միայն այդ գործերը բաւական կը լինէին, որպէսզի նա դասուէր վաստակաւոր բանասերների շարքը։ Ուսումնասիրողները կարող են ամենայն վստահութեամբ օգտագործել նրա հրատարակած բնագրերը. դրանք գիտական տեսակէտից հաւաստի են, որովհետեւ Մարիէսը բնագրերի համեմատաբար ուսումնասիրութեան, քննական բազմաթիւ տեսակէտից և մեկնաբանութեան հարցերում ամենափոքր թերութիւնն անգամ չի հանդուրժել։ Նա կղել է այն համեստ գրական մշակներից, որոնք իրենց ընտրած մասնագիտութեան մէջ կատարելութեան են ձգտում։

Մարիէսը, իբրեւ գրաբարի ուսուցիչ, ունեցել է քիչ, բայց արժանաւոր աշակերտներ, որոնք դա պատիւ են համարել իրենց համար։ Նրանք լեզուաբանութեան և բանասիրութեան անգոստանը մշակել են և շարունակում են մշակել Ֆրանսիայում, Բելգիայում, Նորվեգիայում, Բուլղարիայում, Ռումինիայում, Բէյրութում, Հռոմում, եթէ միայն սահմանափակուենք թէկուզ հայագիտութեամբ։ Նրանք միահամուռ յայտարարել են, որ իրենց ուսուցիչը խստապահանջ և նայիսկ բռնապետ լինելով հայերէնի և միւս լեզուների առաջնութեան և ուրիշ հարցերում՝ ամենափոքրիկ սխալն անգամ չի հանդուրժել։ Նա կարողացել է ուսանողների ուշադրութիւնը սեւեռել լեզուական երևոյթների վրայ, ըմբռնել տալ լեզուի ոգին, քաջալերել, ղեկավարել և նրանցից առաւելագոյնն ստանալ գիտութեան համար։ Այդպիսով նա ամբողջ օրեր է արամադրել կարգալու, բարերար անկեղծութեամբ քննադատելու և գնահատելու յօդուածներ, թարգմանութիւններ, ակնարկներ, աշխատութիւններ։ Բազմաթիւ օրինակներից նշենք միայն երկուսը, որոնք անմիջական կապ ունեն հայագիտութեան հետ։

Ֆրանսիական Ակադեմիայի անգամ պատմաբան Ռենէ Գրուսէն իր «Histoire de l'Arménie» («Հայոց պատմութիւն») աշխատութիւնը ձօնել է Ա. Զօպանեանին, Ֆ. Ֆէդիին և Լ. Մարիէսին՝ յայտարարելով, որ իր գրքի համար հեղինակը շատ է պարտական նաեւ վերջինիս։

Սահակ վարդապետ Քէշիշեանը յայտնի է Գրիգոր Նարեկացու «Մատեն»ի ֆրանսերէն գեղեցիկ թարգմանութեամբ։ Նա իր աշխատանքը մասամբ վերանայել է Մարիէսի հետ. «Լուսի Մարիէսին հետ աշխատելու պատիւն ունեցայ 15 օր փարիզ, Օգոստոս 1952ին, Նարեկացիի ֆրանսերէն թարգմանութիւնն աչքէ անցընելու համար... Մարիէսին հետ աշխատելու եմ, որպէսզի թարգմանութիւնս խկապէս գի-

⁵ Լոյս է տեսել Une cérémonie consacrée à la mémoire du Professeur Antoine Meillet ջրքոյկում, Paris, 1937, էջ 28-49. տե՛ս ստորև։

տական ըլլայ, որովհետեւ Հայր Մարիէս շատ խստապահանջ էր, և իր խորհուրդները մեծապէս օգտակար դարձան ինծի»⁶։

Հայագիտութեան բնագաւառում Մարիէսի ֆրանսիացի աշակերտներէց են Սը-սիլվա Լիոնէ և Ծարլ Մեսսիէ վարդապետները։ Առաջինը Հոսմի՝ Աստուածաշնչի դպրոցի եկեղեցական բանասիրութեան բաժնի վարիչն է։ Հայագիտութեան մէջ յայտնի է իր «Le Parfait en arménien classique» («Դասական հայերէնի յարակաւարը», Փարիզ, 1933, 188 էջ), «Les Origines de la version arménienne et le Diatessaron» («Աւեստրանի հայերէն թարգմանութիւնը և Համադրութեան Աւեստրանը», Հոսմ, 1950, 302 էջ) արժէքաւոր աշխատութիւններով ու յօդուածներով։ Նշուած առաջին աշխատութեան առաջարկում (էջ XIV) նա Մարիէսի մասին գրել է. «Թող ինձ թոյլ տրուի այստեղ շնորհակալութիւն յայտնել ոչ միայն իմ ուսուցիչ Ա. Միլէին, այլև Հ. Լուի Մարիէսին՝ Institut Catholique դպրոցի իմ դասախօսին. նա ինձ սրտաբաց հաղորդեց իր գիտելիքները, կարծիքները, դիտողութիւնները և արամադրեց մինչև իսկ անտիպ աշխատութիւններ»։ Սրանցից էր եզնիկի անտիպ ֆրանսերէն թարգմանութիւնը և «Les formes verbales de l'arménien moderne» («Արդի հայերէնի բայական ձևերը»), որ այն ժամանակ (1933 թ.) անտիպ է եղել, ինչպէս Լիոնէն գրել է իր աշխատութեան էջ 169-ում, և մնացել է անտիպ, սակայն ո՞ւմ մօտ։

Ծարլ Մեսսիէն՝ Մարիէսի միւս աշակերտը, հայագէտ է և վրացագէտ։ Ծնունդ է 1904ին, Լիոնում։ Մարիէսին աշակերտել է 1935 - 1946 թթ.։ «Էնսիկլոկոպիկ» դպրոցում իր ուսուցչի փոխարէն 1946ից դասաւանդում է գրաբար, իսկ 1951ից՝ նաև վրացերէն։ Փարիզի լեզուաբանական ընկերութեան և «Revue des Études Arméniennes» հայագիտական հանդէսի նոր շարքի խմբագրական յանձնաժողովի անդամ է։ Մարիէսին ոչ միայն աշխատակցել է հայագիտական հրատարակութիւններին, այլև ինքն էլ հայագիտական աշխատութիւններին, հայ հին

⁶ Ս. Վ. Քէլիշեանի մեզ գրած անձնական նամակներից (2 փետրուար և 21 Ապրիլ 1968 թ.)։

Թերևս աւելորդ չի լինի այստեղ թարգմանաբար ներկայացնել Մարիէսի կարծիքը թարգմանչի մասին.

«ես՝ ներքոստորագրեալս, չուրջ տասնհինգ օր, օրական երեք ժամ աշխատեցի Սահակ Վ. Քէլիշեանի հետ»։

Միասին վերանայում էինք Դրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» նրա կատարած նախնական թարգմանութիւնը։ Այսպիսով վերանայեցինք մի մեծ մաս՝ համարեա մէկ տասներորդը։ Ես համոզուեցի, որ Ս. Քէլիշեանը խորապէս տիրապետում է՝ 1. գրաբարին և 2. ֆրանսերէնին։ Յայտնի է, թէ որքան ընդարձակ է Դրիգոր Նարեկացու բառապաշարը։ Արդ, Ս. Վ. Քէլիշեանը, կրթութիւն ստացած աւելի քան շատ ֆրանսիացիներ, յիշատար և ճշգրտօրէն գիտակ է ֆրանսերէնի բառապանծին, խմաստային նրբերանգներին և հոմանիշներին։ Նա նրբօրէն ընկալել է նաև ֆրանսերէնի քերականական, շարահիւսական և ոճական հնարները։ Դրանց աւելացնենք նաև այն, որ իր աստուածաբանական և հոգեւոր կատարեալ կրթութեան շնորհիւ դիտել աննկատելի արուեստով բայց և ճշգրտութեամբ տեսնել և երևան հանել այն, ինչ կարելի է այդ երկի կառուցուածքն անուանել, որի մէջ Դրիգոր Նարեկացին բանաստեղծական լիթանիաներով արտայայտուելով դարգացնում է կրօնական հոխ և խորունկ միտք»։

Մարիէսի ձեռքով գրուած կարծիքի լուսատիպ պատճենը մեզ տրամադրեց Ս. Վ. Քէլիշեանը։

գրական երկերի ֆրանսերէն թարգմանութիւնների և հայագիտական գրքերի գրախօսութիւնների հեղինակ է:

Մարիէսը հայագիտութեան ծառայութիւններ է մատուցել նաև առաջ նուիրատուութիւններ անելով Մեյէի և Մաքլէրի հիմնադրած (1920) «Հայագիտական հանդէս»ին, ինչպէս նշուած է հանդէսի նախագահի տարեկան հաշուետուութիւնների մէջ:

Հ. Ֆ. Գրաֆէնի (F. Graffin) շնորհիւ մեր ձեռքի տակ ունենք Լուի Մարիէսի կազմած հաշուետուութիւնը (Յունիս 1935 թ.), որով ծանուցում է «էնսիսիւ կաթոլիկ» դպրոցում հայագիտութեան ամբիոնի 1930-1935 տարիների գործունէութեան մասին: Ֆրանսիայում հայագիտութեան պատմութեան և Մարիէսի կենսագրութեան լուսարանման նպատակով՝ թարգմանաբար այսօր ներկայացնում ենք առաջին մասը:

«Վերջին այս հինգ տարիներում (1930-1935) գրաբարի դասընթացին հետևել են ֆրանսիացի, բելգիացի, նորվեգիացի, լեհ, չեխ, բուլղար, ռումինացի, նոյնիսկ հայ ունկնդիրներ՝ աշխարհական, վարդապետ, կրօնաւոր:

«Երթասարգ լեզուարաններ, իրանագէտներ և յատկապէս խեթագէտներ դասընթացին հետևում են լրացնելու համար դասական հայերէնի իրենց գիտելիքները, որոնք անհրաժեշտ են նրանց մասնագիտութեան: Քարոզիչ կրօնաւորներ են գալիս սովորելու հայերէնի հնագոյն ձևը, որով շարադրուած են այն ազգի եկեղեցական և պատմագրական կոթողները, որին կաթողիկէ միասնութեան բերելու են կոչուած նրանք. այդ լեզուի գիտակութիւնն անհրաժեշտ է նրանց առաքելութեան:

«էնսիսիւ կաթոլիկ» դպրոցի գրաբարի դասընթացը կապի մէջ է Վոլքե գր Ֆրանսի և Բարձրագոյն ուսմանց դպրոցի Պատմագրական և բանասիրական ու կրօնագիտական բաժինների, ինչպէս նաև Արեւելեան կենդանի լեզուների ազգային դպրոցի հետ:

«Բարձրագոյն ուսմանց դպրոցի (Պատմագրական և բանասիրական բաժին) վկայական ստանալու համար երեք աւարտական աշխատանքներ են դրուել դասական հայերէնի վերաբերեալ 'Էնսիսիւ կաթոլիկ' դպրոցի (գրաբարի) դասախօսի ղեկավարութեամբ, որ նշանակուել է դրանց պաշտօնական ընդդիմախօսը:

«Կրօնագիտական բաժինի նոյն վկայականին արժանանալու համար մի ուրիշ աշխատութիւն է գրուած, որի հեղինակը պատմական հետազոտութիւններ է կատարում հայկական հնագիտութեան և արուեստի հարցերի պարզարանման նպատակով: Նոյն դասախօսի ղեկավարութեամբ, այդ աշխատանքը պատրաստուած է Հ. Մ. Թալոնը (P. M. Tallon):

«Դարձեալ նոյն ղեկավարութեամբ, մի չրջանաւարտ, որ վկայեալ է Արեւելեան լեզուների ազգային դպրոցից և 'Էնսիսիւ կաթոլիկ' դպրոցից, Պրն. Մ. Ժոնվալը (M. Jonval), համալսարանաւարտ, որ մի քանի տարի դասաւանդել է Բարձրագոյն ուսմանց դպրոցում բալթիկական լեզուներ, դոկտորական դիսերտացիա է պատրաստում Պօղոս առաքեալի աստուածաբանական յունարէն բառերի հայերէն համապատասխանների մասին՝ նրա թղթերի և մեկնաբանութիւնների թարգմանութիւնների մէջ: Աշխատութիւնը լինելու է Պետական դոկտորայի գըլխաւոր դիսերտացիան:

«Մի չրջանաւարտ՝ Հ. Սթանիսլաս Լիոնէն, Յիսուսեան միաբա-

նութիւնից, գրել է Նոր կտակարանի հայերէն թարգմանութեան վերաբերող բաժինը Նոր կտակարանի բնագրային քննութեան վերաբերող մի աշխատութեան մէջ, որ այժմ հրատարակուած է Հ. Լազարանժը:

«Մի ուրիշ շրջանաւարտ՝ Լ. Ֆրուադըվա վարդապետը (Abbé L. Froidevaux), դպաոր Գ. Բայեանի աշխատակցութեամբ չաւառվ լոյս կ'ընծայի Հերոնիմոսի «Ընդդէմ աղանդաց»ի հայերէն թարգմանութեան Դ և Ե գրքերը:

«Արեւելեան լեզուների ազգային դպրոցի և 'Էնստիտիւ կաթոլիկ' դպրոցի երկու շրջանաւարտ այսօր դասախօս են՝ մէկը՝ պ. Հանս Ֆոկթ, Օսլոյի (Նորվիգիա) և միւսը՝ պ. Վլադ Բընըրցիանու, Չերնոուցիի (Ռուս-միսիա) համալսարաններում:

«Օսլոյի համալսարանը պ. Հ. Ֆոկթի նախաձեռնութեամբ այս տարի՝ 1934 - 1935 ուսումնական տարում, 'Էնստիտիւ կաթոլիկ' դպրոցն է ուղարկել պ. Քննութ Բերգսլանդին, որ հիանալիօրէն օժտուած նոր-վեգիացի երիտասարդ լեզուաբան է, խեթերէն և միաժամանակ դասու-կան հայերէն ուսանելու համար:

«Դասախօսը (այսինքն՝ Լուի Մարիէսը — Մ. Մ.) Լուսաւորու-թեան նախարարութեան կողմից նշանակուած է հայոց լեզուի քննական յանձնաժողովի անդամ Արեւելեան լեզուների ազգային դպրոցում:

«... 1934 թուականի Մարտի 11ին, Ակադեմիայի անդամ և 'Կու-լէժ դը Ֆրանս' դպրոցի դասախօս պ. Ա. Մեյէի և Արեւելեան լեզու-ների ազգային դպրոցում հայերէնի դասախօս պ. Ֆրէդէրիք Մաքլէրի հետ միասին նա (այսինքն՝ Մարիէսը — Մ. Մ.) Սուրբ Ղազարի (Վենե-տիկ) կաճառի անդամ նշանակուեց:

«... Պ. Ա. Մեյէն դասախօսին պատիւ արեց՝ խնդրելով աշխա-տակցել «Ուրուալիժ դասական հայերէնի համեմատական քերականութեան» իր գրքի վերահրատարակութեան: Այս աշխատութիւնը տպագրուած է:

«Նոյն գիտնական Պրոֆեսորի հետ նա աշխատակցել է երեք յօդ-ուածի պատրաստութեան և շարագրման, որոնք չաւառվ լոյս կը տես-նեն Փարիզի Լեզուաբանական ընկերութեան Տեղեկագրում կամ Բան-բերում. դրանք ցոյց կը տան այն յատուկ հետաքրքրականութիւնը, որ ներկայացնում է դասական հայերէնը հնդեւրոպական լեզուների համե-մատական ուսումնասիրութեան համար»:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ,

Երուսաղէմ

(Շ-դ-դ-է-է-է)

